

նորատիպ դուարձալի բացատրութիւն մը կարճեցեալ բնագրի մը հետ չհամեմատուող թարգմանութեանց համար... (*) :

Յակոբ Զուղայեցիի մասին բնական է կարելի էր աւելի երկար եւ շատ աւելի մանրակրկիտ աշխատութիւն մը պատրաստել գոյութիւն ունեցող մեծաթիւ վաւերագրութիւններով : Դժբախտաբար աշխատութիւնս կրճատեցի, ոչ թէ աշխատելու չկամութեամբ, քա՛ւ լիցի, եւ շատ կը ցանկայի այդ աշխատանքը կատարել, որ հաւանաբար հատորներէ բաղկանար, սակայն ո՞վ եւ ո՞ւր կարելի պիտի ըլլար ինծի հրատարակիչ գտնել եւ հրատարակել այդ աշխատութիւնը, մանաւանդ երբ անդին ունիմ բազմաթիւ մանր, սակայն կիսաւարտ գործեր :

Ոչ մէկ ցանկութիւն ունիմ կրօնական նկատումներով դրելու. Յակոբ Զուղայեցիի մասին այս քննական աշխատութիւնս պարզապէս պատմական անձի մը ինքնութիւնը իր հարազատութեան մէջ ներկայացնել է : Յակոբ Զուղայեցիի մասին եղած են վերագրումներ հաւատադարձութեան, որոնց համար տրուած ապացոյցները սակայն ատիկա չեն ապացուցաներ : Ընդհակառակն, առատ եւ շարունակական վաւերական նիւթ կայ որ ցոյց կուտայ թէ ան Հռոմէադաւան չէ եղած : Յաւակն է որ կան մարդիկ Հռոմի սրբազան եկեղեցւոյ իբր թէ ծառայողներ, որոնք յօնք չիներու տեղ աչք կը հանեն կարեւորութիւն տալով աղաղակող հին կեղծարարութեանց, իբր թէ

(*) Յակոբ Զուղայեցիի մահուըմէն երեք շաբաթ վերջ Զուղայեցիի վերագրուած «դաւանագիրը» Կ. Պոլսոյ Ֆրանսական դեսպան Կիյէրակէ «դաւանագիրը» կը դրկէ Ֆրանսայի քաղաւորին : Հետաքրքրական է թէ ինչո՞ւ Հռոմ չի դրկուիր ուղղակի եւ նախ Ֆրանսայի քաղաւորին : Արդե՞սօք դաւանագրին հեղինակները վախցան, որ կեղծիքը կրնայ մէջտեղ ելլել ի Հռոմ : Հռոմ կ'երեւի թէ հաստատ տեղեկութիւններ չէր ստանար Զուղայեցիի մասին : Օրինակ Կաթալիկներու եպիսկոպոս Ֆրանսուա Բիֆէ եւրոպական օրացոյցով 26 Սեպտեմբրին կը գրէ որ Յակոբ Զուղայեցին 70 տարեկան էր (մինչ 82 տարեկան էր) : Մահուան քուակամը կը գշտակէ եւրոպական օրացոյցով «13 Օգոստոս 1680» :

Հռոմի Առաքելական Սրբազան Եկեղեցին կարիք ունենար ստապատիր կեղծ թուղթերու՝ իր տիեզերական կարեւորութիւնը ցոյց տալու համար : Ատիկա անտարեկոյս նոյն այն մտայնութիւնն է որ այս կարգ մը ողորմելի կեղծարարութեանց տուն տուած էր այդ հին դարերուն, միշտ եռասիրական, նիւթական ակնկալութենէ խթանուած : Այս կեղծիքներուն նոր փաստաբանները հին կեղծարարներուն մակարդակին կ'իջնեն անարժան՝ Հռոմի ներկայ ոգիին եւ զեկավարութեան : Մեր ցանկութիւնը պարզապէս մեր պատմութիւնը եւ անոր ականաւոր անձնաւորութիւնները մեր կարողութեան չափով քննականօրէն ներկայացնել է : Ինչպէս Իսրայէլ Օրիի մասին, նոյնպէս այլ Յակոբ Զուղայեցի Կաթոլիկոսին մասին մեր աշխատանքը լոկ ճշմարտութեան յայտնութեան համար էր եւ է :

Յակոբ Զուղայեցին խառնած են նաեւ Հայկական Ազատագրական շարժումներուն : Որեւէ ապացոյց չկայ այդ մասին, բացի մեր վերը իր կարգին ցոյց տուած չարամիտ եւ դաւաճանական զրպարտութենէն, որ ձիւնակոյտ մը եղած է՝ հսկայական աններելի սուտ մը կորիզ ունենալով :

Ասոր վրայ յետոյ Իսրայէլ Օրին իր կարգին չարաշահել ուզած է : Եւ ահա եկեղեցական տաղնապներէ եւ պարտքերէ աչք չբացող Յակոբ Զուղայեցիին ուսերուն նետուած է ուրիշ սարդոստայնէ ստապատում չուրջառ մը :

Աւարտելէ առաջ հոս նկատի կ'առնեմ գրութիւն մը որ ժամանակին հրատարակած է վաստակաւոր պատմաբան-նաղատ Պրոֆ. Աշոտ Յովհաննէսեան էջմիածնայ ԱՐԱՐԱՏ պաշտօնաթերթ մասագրին մէջ «Յակոբ Զուղայեցու Մի Գրութիւնը Ռուս Արքեպիսքին» (1915 էջ 775-781) : Յարգելի գրողը կ'ընէ շարք մը տեսութիւններ եւ հետեւութիւններ բոլորովին ենթադրական, եւ կը հրատարակէ վաւերաթուղթ մը :

Մենք նախ հոս կ'արտասուենք այդ վաւերաթուղթը յարգելի Պրոֆ. ին տուած թարգմանութեամբ, ինչպէս նաեւ իր կարեւորագոյն բացատրութեամբ :

«Ամբողջ գրութիւնը, որի փոքր ինչ